Նատալիա Մելքումեանցի հետ։ Մինոդը քննելով գտաւ, որ այդ պսակը կատարուած է ազգականութեան 8-րդ աստիճանում, և ինքնագլուխ պսակագիր արեղան վախճանուել է. ուստի հրամայեց նոցա պսակը համարել վաւերական։

—

Օգոստ. 26. Շամախու Կոնսիստորիայի միջնորդութեան համեմատ Մինոդը թոյլ է տալիս ածուրդով վարձու տալ Սաղեանի վանքի հողերը և ածուրդի թերթը ուղարկել Մինոդ հաստատելու համար։

—

Օգոստ. 26. Տաթեւի վիճակի Ալիղուլի գիւղի ժողովուրդը բողոքել էր իւրեանց Սարգիս քահանայի վերայ, որ թողնելով իւր քահանայութեան պաշտօնը՝ միշտ գնում է Քարաշէն գիւղը նոցա հովուելու համար։ Եւ երբոր Ալիղուլեցիք զուրկ մնալով հոգևոր մխիթարութիւնից՝ խնդրում են նրանից, որ իրենց չթողնէ լքած եկեղեցու շնորհից՝ այն ժամանակ Տէր Սարգիս քահանան կշտամբում է նրանց անվայել խօսքերով. Մինոդը այս բողոքը ուղարկելով Կոնսիստորիան, պատուիրում է օրինաւոր քննութեամբ անյապաղ ստուգել այս բողոքի հանգամանքը և քննութեան արդիւնքը մատուցանել Մինոդին իւր դատողութեան հետ։ Բայց Կոնսիստորիան յայտնում է, թէ բողոքարկու ժողովուրդը հաշտուած է իւրեանց քահանայի հետ և խնդրում է, որ այդ բողոքը մնայ առանց հետևանքի. ուստի Մինոդը հրամայեց այս գործը աւարտած համարել հաշտութեան պատճառով։

—

Օգոստ. 27. Մինոդը քննելով Մարմարաշէն վանքի վերատեսուչ Երեմեանց Մովսէս քահանայի տասն ամեայ գործունէութեան հաշիւը՝ հրամայեց. Մարմարաշէն վանքի (Շիրակ գաւառ) հսկողութիւնը վերատին յանձնել Մովսէս քահանային, որ նա իւր պատասխանատուութեամբ ստանայ այդ վանքի բոլոր մուտքը առանց միջամտութեան եպիսկոպոսի կամ ուրիշ մարդու։

Օգոստ. 27. Տաշխալա գիւղի տանուտէր Պետրոս Դասպարեանը բողոքում է նոյն գիւղի ծխատէր Յովհաննէս քահանայի վերայ, թէ ձեռնամուխ է լինում աշխարհական գործերին, իւր անխաղաղասէր բարքով զրգռում է ժողովուրդը, և առանց թոյլտուութեան հոգևոր իշխանութեան պսակների խորհուրդներ է կատարում։ Մինոդը Տէր Յովհաննէսին յանցաւոր չգտնելով՝ հրամայեց զգուշացնել Տէր Յովհաննէսին էլ, Հոռոմոսի վանահայր գործակալին էլ, որ առաջինը չվատահանայ իւր ժողովրդի պսակը օրհնել առանց մերձաւոր իշխանութեան գրաւոր հրամանի. իսկ երկրորդը չվատահանայ պսակների տուրքը առնել առանց սահմանուած կարգով ապահովագիր տալու։

—

Օգոստ. 29. Սրբազնագոյն և Վեհափառ Հայրապետի պատուիրանի համեմատ Արժ. Սահակ ծ. վարդապետ Ալիսեանը գնաց Սպահանի Ամենափրկիչ վանքը (Պարսկաստան) ծառայութեան գործով. ուստի Մինոդը հրամայեց. Մայր Աթոռի գանձարանից փոխ տալ Սահակ վարդապետին 250 ռուբլի ճանապարհածախս և պատուիրել Հնդկաստանի և Պարսկաստանի առաջնորդ Գերապատիւ Եսայի Արքեպիսկոպոսին, որ այն 250 ր. հասցնէ Մայր Աթոռի գանձարանը այն թեմի արդիւնքից։

—

ՏԻԵԶԵՐՈՒՏԻՒՆ.

—

«Արարատ»-ի անցեալ համարում էջ. 206. երկրորդ սիւնակ, 18 դ տող. «Դուք ալ ձեր գործ կերկարէք. դուք ալ ձեր փոլիթիքն ունիք։ Պէտք է կարճ ընել, ճանապարհը ցուցնել, մնացեալն ինքեանք կաշխատին». խօսքերը վերաբերում են առհասարակ բոլոր ուսուցիչներին։